Caucasus Edition

Journal of Conflict Transformation

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Քաղաքական սեղմագրեր

Նոյեմբեր, 2018

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՈՒՄՆԵՐՆ ՈՒ ԿՈՆՖԼԻԿՏՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ

Քաղաքական սեղմագրեր

Նոյեմբեր, **2018**

Խմբագրության անունից

«Կովկասյան թողարկում. կոնֆլիկտների վերափոխման հանդեսի» այս համարում Հարավային Կովկասի, Ռուսաստանի ու Թուրքիայի մի շարք վերլուծաբաններ ու փորձագետներ վերլուծում են տարածաշրջանի բռնի կոնֆլիկտները և առաջարկություններ են ներկայացնում տարբեր դերակատարների, որ նպատակ ունեն ազդել կոնֆլիկտների համատեքստի վրա:

Չնայած այն բանին, որ նախորդ երկու տարիները բնութագրվեցին Թուրքիայում և Լեռնային Ղարաբաղում զինված առճակատումների սրմամբ, 2018 թվականը հարաբերական հանգիստ տարի էր պատերազմական գոտիներում: Այնուամենայնիվ, ընդհանուր լարվածությունը դեռ մեծ է, և մշտապես առկա է բռնի հակամարտության վերսկսման վտանգը: 2018 թվականի հիմնական իրադարձությունները, որոնք կարող էին ազդեցություն ունենալ Հարավային Կովկասում կոնֆլիկտների դինամիկայի վրա, կապված էին ներքին քաղաքական գործընթացների հետ Հայաստանում, ինչպես նաև՝ Թուրքիայում և Վրաստանում, բայց՝ ավելի նվազ չափով:

Ամենակարևոր իրադարձությունները, որ հնարավորության փոքրիկ պատուհան բացեցին Լեռնային Ղարաբաղի հարցով բանակցություններում առաջընթացի համար, տեղի ունեցան Հայաստանում: 2017 թվականի «Կովկասյան թողարկման» տպագիր հրատարակումից ի վեր՝ Հայաստանում նախագահականից դեպի խորհրդարանական համակարգ անցումն ուղեկցվել է բողոքի զանգվածային ցույցերով և քաղաքացիական անհնազանդության գործողություններով: «Քաղաքացիական պայմանագիր» ընդդիմադիր կուսակցության և քաղաքացիական հասարակության խմբերի կազմակերպած բողոքի շարժումը ստիպեց վարչապետ դարձած գործող նախագահին հրաժարական տալ:

Այս շարժումը, որը հայտնի է որպես Հայաստանի «թավշյա հեղափոխություն», իշխանության բերեց նոր կառավարություն՝ մեծապես կազմված երիտասարդ, անկախ ակտիվիստներից և լրագրողներից: Հայաստանում խորհրդարանական ընտրությունները նախատեսված է անցկացնել 2018 թվականի դեկտեմբերի 9-ին, հենց այն ժամանակ, երբ այս թողարկումը տպագրվելու է. նոր կառավարությունը՝ նախկին անկախ լրագրող Նիկոլ Փաշինյանի ղեկավարությամբ, ամենայն հավանականությամբ կամրապնդի իր իշխանությունը՝ նորանոր լրագրողների և ակտիվիստների բերելով օրենսդիր մարմին:

Մինչ Հայաստանը գտնվում էր դեպի խորհրդարանական համակարգ անցումային փուլում և ժողովրդավարացման գործընթացում, Թուրքիան գնաց հակառակ ուղղությամբ և դարձավ նախագահական հանրապետություն՝ Ռեջեփ Թայիփ Էրդողանի իշխանության ամրապնդմամբ: Միևնույն ժամանակ Վրաստանում, որն անցում է կատարել խորհրդարանական համակարգի դեռ 2012 թվականին, վերջին նախագահական ընտրությունների շուրջ դաժան պայքար էր գնում: «Միացյալ ազգային շարժումը» ներկայացնող թեկնածուի և իշխող «Վրացական երազանք» կոալիցիայի աջակցությունը վայելող թեկնածուի միջև պայքարը դարձավ նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի

և Վրաստանի ներկայիս ոչ պաշտոնական առաջնորդ Բիձինա Իվանիշվիլիի միջև իշխանության համար տարվող թեժ պայքարի: Ադրբեջանում, Ռուսաստանում ու տարածաշրջանի մյուս երկրներում նման դրամատիկ զարգացումներ չեղան, որ դիտարկելի էին և համադրելի՝ հարևան երկրներում ընթացող փոփոխություններին:

Ինչպիսի՞ ազդեցություն ունեն այս փոփոխությունները Հարավային Կովկասի և շրջակա կոնֆլիկտների վրա: 2018-ի այս երկրորդ տպագիր հրատարակության աշխատություններն ուսումնասիրում են 2017-2018 թվականների զարգացումների ազդեցությունը կոնֆլիկտի դիսկուրսի և տարածաշրջանի պետություններում և հասարակություններում և նրանց միջև հարաբերությունների վրա:

«Քաղաքական անցումներն ու կոնֆլիկտները Հարավային Կովկասում» վերնագրով այս նոր թողարկման համահեղինակներ են հետազոտողներ և վերլուծաբաններ Հայաստանից, Ադրբեջանից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքիայից և Միացյալ Թագավորությունից:

Թողարկումը սկսվում է երեք էսսեներով, որոնք անդրադարձ են կատարում արտաքին դերակատարների ազդեցությանը Հարավային Կովկասի կոնֆլիկտների վրա: Նինա Քասփերսենը Յորքի համալսարանից ուսումնասիրում է միջազգային դերակատարների քաղաքականությունը Հարավային Կովկասի դե ֆակտո պետությունների՝ Աբխազիայի, Լեռնային Ղարաբաղի և Հարավային Օսիայի հարցերում: Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանից Սերգեյ Մարկեդոնովն անդրադարձ է կատարում Հարավային Կովկասում կոնֆլիկտների վերաբերյալ Մոսկվայի քաղաքականությունը: Բիլգի համալսարանից Օմեր Թուրանը գրում է Թուրքիայում ներքին զարգացումների և շրջակա կոնֆլիկտների վրա դրանց հետևանքների մասին:

Թողարկման երկրորդ հատվածում ներկայացված է երեք զույգ հոդված, որոնց հեղինակները հետխորհրդային կոնֆլիկտներից ուղղակիորեն տուժած երկրների վերլուծաբաններ են: Բաքար Բերեկաշվիլին վրաց-ամերիկյան համալսարանից քննադատում է Վրաստանում ազգայնական դիսկուրսների գերակայությունն ու այն վնասը, որ դրանք պատճառել են երկրի զարգացմանը: Մոսկվայի Տնտեսագիտության բարձրագույն դպրոցից Դմիտրի Դուբրովսկին քննարկում է վերջին տասնամյակի ռուս-վրացական հարաբերությունները:

Հոդվածների մյուս զույգը հեղինակել են Հայաստանի ու Ադրբեջանի քաղաքագետներ: Միքայել Զոլյանն ու Լալա Ջումաևան անդրադարձ են կատարում վերջին մի քանի տարում Հայաստանի ու Ադրբեջանի քաղաքական անցումներին և կոնֆլիկտների դիսկուրսի վերափոխման վրա դրանց ազդեցությանը:

Համարը եզրափակում է Հայաստանի և Ադրբեջանի այլ վերլուծաբանների գրած երկու հոդված: Անահիտ Շիրինյանն ու Զաուր Շիրիևը հատկապես կենտրոնանում են Հայաստանի հետհեղափոխական փուլի և կոնֆլիկտի վերաբերյալ նոր ղեկավարության դիսկուրսի վրա, ինչպես նաև քննում են այս փոփոխությունների ազդեցությունը Ադրբեջանում առկա՝ կոնֆլիկտի վերաբերյալ դիսկուրսի վրա:

Բոլոր այս հոդվածներն ավարտվում են քաղաքականության առաջարկություններով՝ ուղղված տեղական և միջազգային քաղաքականություն մշակողներին և Հարավային Կովկասի և շրջակա կոնֆլիկտների վերափոխման մեջ ներգրավված քաղաքացիական հասարակության դերակատարներին: Վերջին երկու զույգ հոդվածների առաջարկությունները համատեղ գրել են համապատասխանաբար Զոլյանն ու Ջումաևան և Շիրինյանն ու Շիրիևը:

Խմբագրական թիմն ու բոլոր հեղինակներն իրենց երախտագիտությունն են հայտնում Շվեդիայի արտաքին գործերի նախարարությանը՝ այս համագործակցությունն ու հրատարակությունը հնարավոր դարձնելու համար:

Խմբագրական թիմ՝ Սոնա Դիլանյան, Ֆիլիպ Գամաղելյան, Սերգեյ Ռումյանսև, Փընար Սայան:

Ներգրավում Հարավային Կովկասի դե ֆակտո պետությունների հետ. կոնֆլիկտի վերափոխման կենսունակ ռազմավարությո՞ւն

Նինա Քասպերսեն

Դե ֆակտո պետությունները, ինչպիսիք են, օրինակ, Աբխազիան, Հարավային Օսիան, Լեռնային Ղարաբաղը, հաճախ բնութագրվում են որպես ինքնիշխան պետությունների քարտեզի վրա «գոյություն չունեցող տեղանքներ», և միջազգային (լայն) ճանաչման բացակայությունը սահմանափակում է նրանց արտաքին շփումները: Հարավային Կովկասի այս անջատված միավորների մեկուսացումը բացասաբար է ազդել կոնֆլիկտների կարգավորման և նույնիսկ կանխարգելման հեռանկարների վրա: Այն խթանել է արմատականացումն ու ուժեղացրել դե ֆակտո պետությունների կախվածությունն իրենց արտաքին հովանավորներից: Չնայած այն բանին, որ ներգրավմանն ամենաուժեղ դիմադրողը սովորաբար ծնող-պետություններն են, դե ֆակտո պետությունները նույնպես միշտ չէ, որ շահագրգիռ են նման կապերի հարցում: Մինչ ծնող-պետությունները մտահոգ են սողացող ճանաչման պրոցեսներով, դե ֆակտո պետությունները, որպես կանոն, մտահոգ են սողացող վերաինտեգրման հեռանկարով և իրենց դե ֆակտո անկախության թուլացմամբ: Երկու կողմն էլ ներգրավումը դիտարկում են գործիքային ձևով: Առաջացող խոչընդոտները երբեմն ամրապնդվում են հովանավոր պետության ներառմամբ: Հովանավոր պետության աջակցությունն ազդում է այն բանի վրա, թե որքան արտաքին կապերի կարիք ունեն դե ֆակտո պետությունները և, հետևաբար, ազդում է նաև առկա ներգրավման սահմանափակ առաջարկն ընդունելու նրանց պատրաստակամության վրա: Օրինակ՝ վրացական և ադրբեջանական կառավարություններն ունեն կարգավիճակին վերաբերող հիմնահարցերի մասին նույնանման մտահոգություններ, բայց նրանցից մեկը որդեգրել է ներգրավման հստակ և գնալով ավելի հավակնոտ քաղաքականություն, իսկ մյուսը դիմադրում է նույնիսկ վստահության ձևավորման ռազմական միջոցառումներին: Աբխազիան և Հարավային Օսիան ավելի մեծ ներգրավման հետաքրքրություն են ցուցաբերում, ինչը դե ֆակտո պաշտոնյաները դիտում են որպես ռազմավարություն, որը կօգնի միջազգային ճանաչման նպատակին հասնել և ապահով լինել Ռուսաստանի ֆինանսական աջակցության նվազման դեպքում: Ամեն դեպքում Աբխազիան դժկամությամբ է ընդունում Թբիլիսիի սահմանած ներգրավման խոչընդոտները: Մերժվում է ցանկացած բան, որը ենթադրում է հիերարխիկ հարաբերություն կամ ծնող-պետությանը թույլ է տալիս հսկել դե ֆակտո պետության գործունեությունը: Աբխազ պաշտոնյաները, օրինակ, շատ արագ մերժեցին վրացական կառավարության կողմից ներկայացված առևտրային առաջարկն՝ ասելով, որ դե ֆակտո ղեկավարության ոչ մի ներկայացուցիչ չի մասնակցել փաթեթի քննարկմանը: Լեռնային Ղարաբաղի կոնֆլիկտի դեպքում հայկական կողմը սովորաբար աջակցում է վստահության կառուցման ռազմական միջոցառումներին և հաճախ պնդում, որ նման միջոցներ պետք է ձեռնարկվեն նախքան ապագա կարգավորման բուն առարկայի քննարկմանն անցնելը: Վստահության կառուցման միջոցներին աջակցությունը կախված է դրանց սպեցիֆիկ տեսակից, իսկ եթե ավելի լայնածավալ ներգրավում լիներ, ղարաբաղյան պաշտոնյաները մի քանի «կարմիր գիծ» կունենային: Հայկական կողմի դիրքորոշման համաձայն՝ վստահության կառուցման միջոցները պետք է ապահովեն և հիմնովին հաստատեն ստատուս քվոյի շարունակությունը: Հետևաբար, հայկական կողմը մերժեց Ղարաբաղի հայկական և ադրբեջանական համայնքների միջև հարաբերությունների խթանմանն ուղղված՝ Ադրբեջանի առաջարկությունը:

Ներգրավման ընկալումը և կարգավիճակի հարցում ենթադրաբար չեզոք տարբերակները չեն կարող վերլուծության ենթարկվել ընդհանուր կոնֆլիկտային դինամիկայից և տեղի սահմանափակումներից առանձին: Օբյեկտիվ «կարմիր գծերի» բացակայությունը նշանակում է, որ երկու կողմերին էլ հնարավոր է համոզել, որ ապամեկուսացումն ուշադրության արժանի տարբերակ է: Վերլուծության արդյունքում

հետևյալ առաջարկներն են մշակվել.

Առաջարկներ

- Ստեղծարար, կարգավիճակի հարցում չեզոք լուծումների մշակումը կօգնի ներգրավման գաղափարը «վաճառել» դե ֆակտո իշխանություններին առանց պարտադիր օտարելու ծնող պետությանը: Օգտակար օրինակ կարող են լինել այլ կոնֆլիկտներ, որոնցում ներգրավված են դե ֆակտո պետություններ:
- Այն, ինչ «կարգավիճակի հարցում չեզոք» է համարվում, տարբերվում է կոնֆլիկտից կոնֆլիկտ: Անհրաժեշտ է ջանքեր ներդնել՝ խրախուսելու և՛ ծնող, և՛ դե ֆակտո պետությանը, որ միջազգային կարգավիճակն ու դրանից բխող սահմանափակումները մեկնաբանեն պակաս խստորեն: Ծնող պետությունները պետք է վստահ լինեն, որ չճանաչելու հանձնառությունը և իրենցից անջատված տարածքի հետ միջազգային լայն ներգրավումը համադրելի են:
- Վստահության կառուցման միջոցառումները կարող են որոշ չափով ապաքաղաքականացված լինել՝ կենտրոնանալով տեխնիկական հարցերի վրա, դրանց իրականացման հարցում ապավինելով ոչ պետական դերակատարների և հանդիպումները կազմակերպելով չեզոք հողի վրա: «International Alert» («Միջազգային ահազանգ») կազմակերպությունը պարզել է, որ ղարաբաղյան հակամարտության պատճառով ուղղակիորեն տուժած շատ մարդիկ պատրաստակամություն են հայտնել հանդիպել «մյուս կողմի» մարդկանց, ուստիև տեղական խաղաղաշինական ներուժը նույնպես պետք է գործի դրվի:
- Վստահության կառուցման ապաքաղաքականացված միջոցառումները կարող են օգտակար առաջին քայլը լինել, որ հիմք կդնեն ավելի հավակնոտ միջոցների: Վստահության արդյունավետ միջոցները ներառում են քաղաքականորեն զգայուն հարցեր և հիմնված են «մյուս երկրի վստահությունը շահելու անհրաժեշտության գործում ներդրված գիտակցված քայլի» վրա:
- Ներգրավումը հաճախ ստիպված կլինի ակնառու կերպով կապվել կարգավորման բանակցությունների հետ՝ որպես փուլային մոտեցման առաջին քայլ կամ որպես զուգահեռ, բայց ձևականորեն կապված գործընթաց: Դե ֆակտո պետության կամ նրա հովանավորների կողմից դիմադրությունից խուսափելու համար հնարավոր է, որ սա պիտի արվի առանց վերջնական կարգավիճակի նախապայմանի՝ այդպիսով անհրաժեշտ դարձնելով որոշակի աստիճանի «կառուցողական անորոշություն»:
- Կարգավորման բանակցությունների բացակայության դեպքում նույնպես ներգրավման նպատակը պիտի հստակ լինի: Օրինակ՝ հարաբերությունների բարելավումը կամ կոնֆլիկտի բորբոքումից խուսափելը:
- Երկու կողմից էլ հռետորաբանության մեղմացումը կարող է օգնել հասնել այս նպատակներին: Բաց մեդիա նախագծերը կարող են օգնել բարելավել գերիշխող դիսկուրսը, բայց ավելի զգալի փոփոխությունները բարձրագույն առաջնորդների մակարդակով ներդրված քայլեր են պահանջում:

Ռուսաստանը և Հարավային Կովկասի կոնֆլիկտները. հիմնական մոտեցումները, խնդիրներն ու հեռանկարները

Սերգեյ Մարկեդոնով

Վերջին մի քանի տարում Միջին Արևելքում և Ուկրաինայում զարգացումները միջազգային օրակարգի հետին պլան են մղել Հարավային Կովկասի քաղաքական իրավիճակը: Այնուամենայնիվ, չնայած փորձագետների և դիվանագետների ուշադրության նվազմանը՝ այս տարածաշրջանը պահում է իր ռազմավարական կարևորությունը:

Կովկասում կոնֆլիկտների վրա մեծապես ազդում են արտաքին գործոնները, դրանց թվում՝ նաև Ռուսաստանի և Արևմուտքի առճակատումը, ինչպես նաև զինված հակամարտությունները Ուկրաինայի հարավ-արևելքում և Սիրիայում: Արդյունքում Կովկասի հարցերն ընդգրկվում են ավելի լայն համատեքստերում: Դրանց տարածաշրջանային ձևաչափին հարաճուն կերպով գումարվում են նաև աշխարհաքաղաքական նկատառումները, ինչը նվազեցնում է փոխզիջման հասնելու հնարավորությունը, քանի որ «զրոյական հաշվով խաղի» սկզբունքը դառնում է գերիշխող: Այս համատեքստում չափազանց կարևոր է Եվրամիության և ՆԱՏՕ-ի անդամ պետությունների և Ռուսաստանի մասնակցությամբ սկսել ընդհանուր և բովանդակային երկխոսություն եվրոպական անվտանգության հարցերի շուրջ, որ հաշվի կառնի Ուկրաինայի, Կովկասի և սևծովյան տարածաշրջանի իրավիճակը: Ներկայումս առանց նվազագույն դրական դինամիկայի՝ Կովկասի կոնֆլիկտներին անդրադառնալը խնդրահարույց է: Այս առումով էական է թարմացնել բոլոր դերակատարների շահերի «գույքագրումը», սահմանել մրցակցային նպատակներ, խնդիրներ և փորձել մշակել «ճանապարհային քարտեզ»՝ չնայած կարգավիճակի հարցերով առկա վեճերին:

Առաջարկներ

Կովկասում գոյություն ունեցող խնդիրներին առնչվող հետևյալ առաջարկները մշակվել են՝ հաշվի առնելով առկա միտումները.

- Առկա բանակցային ձևաչափերի փլուզումը պետք է կանխվի. խոսքը Կովկասում իրավիճակի և Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման շուրջ ժնևյան բանակցությունների մասին է: Այս բանակցությունները չափազանց կարևոր են՝ որպես հակամարտող կողմերի և խաղաղաշինական գործընթացում ներգրավված այլ դերակատարների միջև հաղորդակցության միջոցներ:

- Ներկայիս համատեքստում ամենակարևոր նպատակն է հասնել ժնևյան բանակցությունների բոլոր կողմերի բանավոր համաձայնությանը՝ Աբխազիայում և Հարավային Օսիայում բռնի ուժի չկիրառման մասին: Այս իրավաբանորեն պարտավորեցնող ուժ չունեցող համաձայնության վրա հենվելով հնարավոր է ապագայում մշակել ավելի մանրամասն փաստաթուղթ:

- Անվտանգության և մարդասիրական հարցերի շուրջ ժնևյան քննարկումների շրջանակներում առանձին աշխատանքային խմբերի աշխատանքը պետք է ակտիվացնել: Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել ձերբակալությունների և ազատազրկման դեպքերը՝ հնարավորինս

հարմարավետ շփումներ ապահովելով կոնֆլիկտի երկու կողմերի բնակիչների միջև:

- Աբխազիայի և Հարավային Օսիայի վերաբերյալ Եվրամիության «ներգրավում առանց ճանաչման» մոտեցման մեջ պետք է ավելացվի պրակտիկ բովանդակություն: Կարևոր է սահմանել ոլորտներ, որոնցում, չնայած կարգավիճակի շուրջ չկարգավորված հարցերին՝ փոխադարձ կապերը հնարավոր են Սուխումիի, Ցխինվալիի, Թբիլիսիի, Մոսկվայի, ԵՄ-ի և այլ դերակատարների միջև:

- Պետք է ակտիվացնել եռակողմ գործընթացները (Հայաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի նախագահների միջև բանակցությունները), առկա դիվանագիտական ձևաչափին զուգահեռ (ԵԱՀԿ Մինսկի խումբ): Եռակողմ ձևաչափն արդեն իրեն արդարացրել է 2008-2012 թվականներին: Այս ձևաչափին հաջողվել է Երևանին ու Բաքվին հեռու պահել Հարավային Օսիայի սցենարի կրկնությունից և նույնիսկ փոխադարձ համաձայնության հասնել մարդասիրական հարցերում, ինչպես նաև ընդհուպ մոտենալ «հիմնական սկզբունքների» շուրջ փոխզիջմանը: Ի լրումն ռուսական աճող մասնակցությանը՝ այս ձևաչափը Մոսկվային թույլ կտա պահպանել համագործակցային կապերը ԵԱՀԿ Մինսկի խմբի երկու համանախագահների՝ Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ, որոնք պատրաստ են այս ուղղությամբ Ռուսաստանի հետ համագործակցությանը: Այս համատեքստում Ռուսաստանի արդյունավետությունը կուժեղացնի Մոսկվայի և Վաշինգտոնի միջև վստահությունը և կնպաստի ավելի լայն միջազգային խնդիրների լուծմանը:

- Հայաստանի նոր իշխանությունների և Ռուսաստանի միջև պետք է կերտվեն կառուցողական հարաբերություններ, որպեսզի հնարավոր լինի կանխել հանրապետության ներսում սուր բևեռացումն ու Ռուսաստանի հետ հարաբերությունների ու եվրասիական ինտեգրման վերագնահատումը: Նոր ղեկավարության հետ բարձրորակ հարաբերությունները չափազանց կարևոր են Լեռնային Ղարաբաղի հարցի կարգավորման համատեքստում: Դրանց շնորհիվ Երևանը կկարողանա հաղթահարել բանակցություններում առկա լճացումն ու վերադառնալ Բաքվի հետ իմաստալից երկխոսությանը:

- Անհրաժեշտ է մշակել ռուս-հայկական հատուկ ինտեգրացիոն փաթեթ, որը կամուրջ կդառնա ԵՄ-ի և ԵԱՏՄ-ի միջև: Չնայած այս հարցը ուղղակիորեն չի առնչվում կոնֆլիկտի կարգավորմանը, այս «և-և» մոդելը և Մոսկվայի ու Բրյուսելի միջև բացահայտ նախընտրանքի մերժումը կարևոր ռազմավարություն է՝ հաշվի առնելով Ռուսաստանի և Արևմուտքի (կամ առնվազն Եվրամիության) միջև պրագմատիկ հարաբերությունների հեռանկարները:

- Պետք է դիվերսիֆիկացվի Մոսկվայի քաղաքականությունը Աբխազիայի և Հարավային Օսիայի հարցերում, որոնց վերնախավերը այլ պատկերացում ունեն իրենց գոյության հեռանկարների մասին: Միաժամանակ Սուխումիի և Ցխինվալիի հետ ինտեգրացիոն քայլերը պետք է առաջ տանել այն բանի հստակ ըմբռնմամբ, որ Ռուսաստանն իր շահերն ու պատճառներն ունի, և Մոսկվայի դիրքորոշումը չի կարող համապատասխանել Աբխազիայի և Հարավային Օսիայի լոբբիստների դիրքորոշմանը (հենց այս առումով էլ օգտակար կլինի ձեռնպահ մնալ Ղրիմի մոդելով «Միացյալ Օսիա» կառուցելու ծրագրեր իրականացնելուց):

- Պետք է զարգացնել Ռուսաստանի և Վրաստանի միջև համագործակցության ոլորտները, որոնք արդեն փորձարկվել են և միավորում են կողմերի դիրքորոշումները՝ չնայած առկա հակասություններին: Սա վերաբերում է Հյուսիսային Կովկասի սահմանագծին առկա անվտանգության խնդիրներին (հատկապես արմատական իսլամիզմին հակադարձելուն): Սա չափազանց կարևոր է Պանկիսի կիրճի համատեքստում, ինչպես նաև Միջին Արևելքի ահաբեկչական և ծայրահեղական խմբավորումներում Վրաստանից և ռուսական Հյուսիսային

Կովկասից ներգաղթյալների մասնակցության հարցում:

- Պետք է պրագմատիկ հարաբերություններ կառուցվեն Ռուսաստանի և Միացյալ Նահանգների ու վերջինիս դաշնակիցների միջև՝ Միջին Արևելքում արմատական ջիհադիզմին դիմակայելու նպատակով (հաշվի առնելով այս իրավիճակի ազդեցությունը Հյուսիսային և Հարավային Կովկասների վրա):
- ՆԱՏՕ-ի և Ռուսաստանի միջև պետք է կանոնավոր շփումներ հաստատվեն՝ Կովկասում ռազմաքաղաքական իրավիճակի մասին տեղեկատվության փոխանակման համար: Այս մոդելն արդեն փորձարկվել է Սիրիայում: Զորավարժությունների ընթացքում հնարավոր բոլոր ռիսկերը պետք է հասցվեն նվազագույնի:
- Կովկասի հարցերի շուրջ պետք է ակտիվացվեն և հավանաբար կանոնավոր խորհրդակցություններ հաստատվեն Մոսկվայի, Անկարայի և Թեհրանի միջև: Համագործակցության այս ձևաչափն արդեն իրեն արդարացրել է Միջին Արևելքում: Կարծես թե կարող է փորձարկվել նաև Հարավային Կովկասում:
- Մեծ Կովկասի շրջանակներում (ներառյալ Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչները, որոնք Ռուսաստանի Դաշնության հետ անմիջական սահման ունե՝ Դաղստանի, Չեչնիայի և Ինգուշեթիայի հատվածներում) պետք է համակարգման մեխանիզմ սահմանվի անվտանգության և միջսահմանային համագործակցության համար: Ռուսական կողմից մասնակիցների թվում կարող են լինել Հյուսիս-կովկասյան դաշնային տարածաշրջանում լիազոր ներկայացուցչի աշխատակազմի անդամներ և Ռուսաստանի արտաքին գործերի նախարարության համապատասխան բաժինների ներկայացուցիչներ: Նման փորձառություն եղել է 1990-ականներին և 2000-ականների առաջին կեսին:
- Փորձագիտական-վերլուծական համակարգող կառույց պիտի ստեղծվի Մեծ Կովկասի համար՝ օժանդակելու Հարավային Կովկասի և Հյուսիսային Կովկասի խնդիրներով զբաղվող փորձագետների միջև շփումների և տեղեկատվության փոխանակման դյուրացմանը: Զատազանց կարևոր է կանոնավոր շփում ապահովել նաև Միջին Արևելքի, ինչպես նաև հակաահաբեկչական խնդիրներով զբաղվող փորձագիտական կառույցների միջև: Սա կբարելավի ամբողջ Մեծ Կովկասի քաղաքական զարգացման, պաշտպանության և անվտանգության հարցերով գործնական առաջարկությունների փորձագիտական աջակցության որակը:

Թուրքիայի արտաքին և ներքին քաղաքականության երկու մոդալություն. փափուկ ուժից մինչև պատերազմական հռետորաբանություն

Օմեր Թուրան

2002 թվականից ի վեր ԱԶԿ կառավարությունը («Արդարություն և զարգացում» կուսակցություն) ներքին և արտաքին քաղաքականությունները շաղկապելու երկու տեսակի մոդալություն է ցուցաբերել: Առաջին մոդալությունը ցիվիլիզացիոնիստ («քաղաքակրթամետ») արտաքին քաղաքական տեսականն էր, որը զուգորդվել է ներքին ասպարեզում ժողովրդավարական բարեփոխումների օրակարգի հետ: Այնուամենայնիվ, 2018 թվականի դրությամբ այս մոդալությունը փոխարինվել է նորով: Նոր մոդալությունն իրենից ներկայացնում է Թուրքիայի համար ԲՐԻԿՍ-ի մեջ (Բրազիլիա, Ռուսաստան, Հնդկաստան, Չինաստան, ՀԱՀ) տեղ գտնելու ձգտումը, և այս արտաքին քաղաքական տեսականը զուգորդվում է ներքին ասպարեզում տեղաշարժի հետ դեպի նախագահական կառավարման համակարգ՝ «մեկ հզոր մարդու» համակարգ: Այն հիմնված է ներքին ասպարեզում հետևողականորեն աճող ավտորիտարիզմի վրա. մինչդեռ երբ գործը հասնում է արտաքին քաղաքականությանը, կայուն և հետևողական ծրագիր չկա: Էրդողանի ոճով արտաքին քաղաքականություն նշանակում է փորձել միաժամանակ Ռուսաստանից գնել C-400 հրթիռային համակարգեր, իսկ ԱՄՆ-ից՝ F-35 կործանիչներ, կամ Սիրիայի ապագայի վերաբերյալ ծրագիր ունենալ Ռուսաստանի հետ միասին՝ չնայած այն բանին, որ Թուրքիան և Սիրիան համաձայնություն չունեն այն հարցի շուրջ, թե որ խմբերին պետք է կոչել ահաբեկչական: Այս քաղաքականությունը նաև նպատակ ունի ԵՄ-ի հետ հարաբերություններում որոշակի առաջընթաց ցույց տալ, բայց՝ առանց Թուրքիայի ամբողջական եվրահինտեգրմանն ուղղված անհրաժեշտ քայլերի: Այս անհետևողական արտաքին քաղաքական տեսականն արգելակում է տարածաշրջանային կայունությանը նպաստելու՝ Թուրքիայի արդեն իսկ սահմանափակ հնարավորությունը:

Այդ դեպքում ինչպիսի՞ն է Էրդողանի գլխավորած այս նոր մոդալության ազդեցությունը Հարավային Կովկասի վրա: Նախ և առաջ՝ երկրորդ մոդալության դեպքում Թուրքիան ավելի շատ տարված է իր երկրի ներքին օրակարգով: Այս առումով Հարավային Կովկասն ու տարածաշրջանային կայունությունը բացակայում են Թուրքիայի օրակարգում: 2000-ական թվականների սկզբին ԱՄՆ-ը կանխագուշակեց, որ Անկարայի և Երևանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում հաջողություններ չգրանցելու պարագայում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը հասնելու շատ քիչ հույս է լինելու: Հետո ԱՄՆ կառավարությունը նախաձեռնեց ժողովրդական դիվանագիտության (Track 2) գործընթացը: Չնայած Հայաստանում և սփյուռքում հանրային կարծիքը լի էր երկխոսության այս խողովակի արդյունավետության մասին թերահավատությամբ, և հստակ արդյունք չգրանցվեց, շատ կարևոր էր նույն սեղանի շուրջ Հայաստանի և Թուրքիայի փորձագետներ ու նախկին դիվանագետներ հավաքելու փորձը: 2018 թվականի դրությամբ այս բանաձևը դեռ ծանրակշիռ է. Անկարայի և Երևանի միջև հարաբերությունների կարգավորումը զգալիորեն կնպաստի Լեռնային Ղարաբաղի հակամարտության լարվածության թուլացմանը: Քանի դեռ Անկարան մտերմանում է Ռուսաստանի հետ և երկրի ներսում ավտորիտար կառավարման ոճն ակտիվացնում, Երևանի հետ կարգավորման և Հարավային Կովկասում տարածաշրջանային կայունության գործում դրական ներդրում նախաձեռնելու իրատեսական հույս չկա: Ավելին, Անկարայի և Բաքվի միջև կապերը չեն սահմանափակվում էթնիկ ինքնությամբ, այլ նաև ներառում են էներգետիկայի և առևտրի հարցեր, ինչն այս երկու երկրներին ուժեղ դաշնակիցներ է դարձնում իրական քաղաքականության («ռեալպոլիտիկի») տիրույթում:

Ինչ վերաբերում է ապագայի հեռանկարներին, չնայած միանձնյա կառավարման համակարգն այսօրվա Թուրքիայում բավականին հզոր է թվում, Կովկասում և Եվրոպայում միջազգային դիտորդները պետք է նկատեն, որ թուրքական քաղաքականության այս ավտորիտար փուլը երկարաժամկետ կենսունակություն չունի: Թուրքիայում ներկայիս տնտեսական ճգնաժամը à la turca ավտորիտարիզմի կայունությունը վիճարկող բազմաթիվ պատճառներից մեկն է միայն: Հավասարապես կարևոր է, որ ներկայիս սահմանադրականացված ավտորիտարիզմը չունի ինստիտուցիոնալ հիմք, ինչն այս իշխանության շարունակականության գլխավոր խնդիրը կդառնա:

Առաջարկներ

Նախ՝ Եվրոպական կառույցները պետք է ավելի լուրջ ընդունեն Թուրքիայի ապաժողովրդավարացումը՝ վերաժողովրդավարացմանն ուղղված քայլերի իրենց պատասխանատվության հետ միասին: Նրանց առաջին պատասխանատվությունն է թույլ չտալ, որ Թուրքիան դառնա երկիր, որ միայն ներգաղթյալների հիմնախնդրի շուրջ է բանակցում: Եվրոպական կառույցները պետք է ցույց տան, որ Անկարան որոշակի գին է վճարելու իրավունքի գերակայությունն ու ազատության հիմարար սկզբունքներն անտեսելու համար և կրելու է հետևանքները: Որպես ելակետ պետք է դիտարկվի վերջերս Եվրախորհրդարանի ընդունած օրինագիծը, ըստ որի, աննախադեպ կարգապահական միջոցառումներ են սահմանվում Հունգարիայի դեմ՝ ԵՄ հիմնարար արժեքները խախտելու համար:

Երկրորդ՝ Եվրոպական կառույցները պետք է գտնեն Եվրոպայի սահմաններից դուրս գտնվող տարածաշրջանների հետ ներգավման նորարարական մեթոդներ: Այս նոր հեռանկարը պետք է ներառի ավելի ուղղակի ներգրավում Միջին Արևելքում և Կովկասում՝ այդպիսով Էրդողանին ուղերձ հղելով, որ ներկայիս ճգնաժամը հաղթահարելու Թուրքիայի միակ իրատեսական տարբերակն իր ներքին և արտաքին քաղաքական հեռանկարները խելամիտ կերպով իրար շաղկապելն է, այն է՝ պատերազմական հռետորաբանությունից հրաժարվելը: Երրորդ՝ Եվրոպական կառույցները, լուրջ ընդունելով Թուրքիայի ներկա ավտորիտարիզմը, պետք է գործեն շատ տարբեր ուղղություններով՝ ներառյալ Թուրքիայում հասարակական կազմակերպությունների հետ կապերի ուժեղացումը: Պատասխանատուն միայն Եվրամիությունը չէ, Եվրոպայի Խորհրդի դերը նույնքան կարևոր է, եթե ոչ ավելի: Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության (HDP) նախկին առաջնորդ Դեմիրթաշ Սելահաթինին ազատ արձակելու մասին ՄԻԵԴ-ի վերջերս կայացած վճիռը նմանօրինակ պատասխանատվության հետ համադրելի որոշում է:

Ազգայնականությունն ու հեգեմոնիան հետխորհրդային Վրաստանում

Բաքար Բերեկաշվիլի

Վրաստանի ժամանակակից ազգայնական դիսկուրսը, որը կենտրոնացած է աշխարհիկ, ամրևմտականացված Վրաստանի վրա, մեծապես սնվում է հակառուսական տրամադրություններով, որ գլխավորում է լիբերալ վերնախավը: 2008 թվականի օգոստոսի պատերազմը խորացրեց թշնամու կերպար կերտելու և դա որպես հզոր քաղաքական և գաղափարական գործիք մատուցելու գործընթացը: Սաակաշվիլիի ռեժիմը հզոր հակառուսական պրոպագանդա էր իրականացնում՝ որպես հռետորական գործիք օգտագործելով ներկայիս Ռուսաստանը Խորհրդային Միությանը հավասարեցնելը: Թշնամու կերպարի կառուցման գործում Ռուսաստանը ներկայացվում էր նաև որպես «եվրոպական քաղաքակրթության» պատմական թշնամի, որը կոնֆլիկտի մեջ է նաև այդ նույն «քաղաքակրթության» պատմական մաս կազմող Վրաստանի հետ: 2008 թվականից հետո ընկած շրջանում ռուսական գործոնը հիմնական չափանիշ դարձավ՝ բոլոր ասպարեզներում հակառակորդներին վարկաբեկելու համար: Ռեժիմի հակառակորդների հետապնդումն ու մարգինալացումը՝ գաղափարական ընդդիմախոսներին Կրեմլի լրտեսներ պիտակելու մեթոդով էր կատարվում, և քաղաքական ուժերը իրար մեղադրում են ռուսամետ լինելու համար: Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման աջակցության ցանկացած արտահայտություն դիտարկվում է որպես «դավաճանական լեզու»: Կարգավորման լեզուն խստորեն դատապարտում են գերիշխող դասակարգը (մարդիկ, ովքեր ազդում են քաղաքական և հանրային կարծիքի ձևավորման վրա) և հիմնահոս լրատվամիջոցները, որոնք դա բնութագրում են որպես «թշնամու հետ գործակցության» խրախուսանք:

Չնայած ցանկացած ազգության կամ էթնիկ խմբի հանդեպ ատելության խոսքի վերացումը հանդիսանում է Վրաստանի ազատական հռետորաբանության կարևոր մասը՝ Ռուսաստանի և ռուսների հանդեպ ատելության խոսքը լիբերալ հերետիկոսությունների շարքում չէ:

Ռուսաստանն ու Վրաստանը 2008-2018 թթ. Էսկեյպիզմ հանուն խաղաղության՞ն

Դմիտրի Դուբրովսկի

Ըստ շատ փորձագետների ու հետազոտողների՝ Վրաստանի ու Ռուսաստանի միջև 2008 թվականի կոնֆլիկտը շրջադարձային կետ դարձավ Ռուսաստանի արտաքին քաղաքականության լուրջ վերափոխման համար: Այս վերափոխման վեկտորը կարելի է բնութագրել որպես տեղաշարժ Ռուսական ազգայնական գաղափարախոսության մեջ՝ էթնիկ ազգայնականությունից դեպի կայսերական: Այս կայսերական ազգայնականությունը որպես գաղափարախոսություն բախվում է վրացական լիբերալ ազգայնականության քաղաքական պատումներին: Ի տարբերություն կայսերական ազգայնականությանը՝ լիբերական ազգայնականությունը նացիոնալիզմի ընդունելի ձև է համարվում միջազգային ժողովրդավարական հանրությունում: Այնուամենայնիվ, դրա չափազանց մեծ ժողովրդականությունը Վրաստանում իր ազդեցությունն է ունեցել կոնֆլիկտային իրավիճակի զարգացման վրա: Ենթադրվում է, որ վրաց-օսական կոնֆլիկտին ուղղակի միջամտությունը,

անջատողականներին ուղղակի աջակցելն ու ռազմական առճակատումն ընկալում են ստեղծել Ռուսաստանի մասին՝ որպես ագրեսորի և վրացական անկախության թշնամու:

Վրաստանում Ռուսաստանի հանդեպ ունեցած ընդհանուր վերաբերմունքը կարելի է բնորոշել երկու ձևով: Մի կողմից մեծամասնությունը Ռուսաստանը համարում է լուրջ սպառնալիք՝ հաշվի առնելով նրա ռազմական գործունեությունն ու աջակցությունը անջատողականներին: Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) անցկացրած վերջին սոցիոլոգիական հարցումը հաստատում է նույն օրինաչափությունը՝ Ռուսաստանը բնակչության մեծամասնության կողմից դիտարկվում է որպես գլխավոր սպառնալիք: Տարածքային ամբողջականության մարտահրավերներից բացի՝ հարցվողները նշում են նաև ռուսական պրոպագանդան՝ որպես հիմնական սպառնալիք: Մյուս կողմից՝ իրական տնտեսական կապերը, զբոսաշրջիկների մեծ թիվը և առօրյա անձնական շփումները նվազեցնում են տեղի այլատյացության (քսենոֆոբիայի) մակարդակը՝ այն թողնելով ռուսական և վրացական իշխանությունների միջև քաղաքական և գաղափարական դիմակայության մակարդակին:

Առաջարկներ

Քանի որ Վրաստանում Ռուսաստանի նպատակներն ու ռազմավարությունն ուղղակիորեն հակասում են վրացական պետականության տրամաբանությանն ու զարգացման նպատակներին, միակ տրամաբանական քայլն է Վրաստանի տարածքային ամբողջականության հարցը երկու երկրների հարաբերություններում չշոշափել: Ըստ էության, այս հարցերին առնչվող ցանկացած քննարկում ներկայիս համատեքստում, ամենայն հավանականությամբ, կխորացնի կոնֆլիկտը, այլ ոչ թե լուծում գտնելու ճանապարհ կբացի: Երկրի ներսում էթնիկ ազգայնականության զարգացումը, անկախ այն բանից, թե Ռուսաստանի նման պահպանողական է, թե Վրաստանի նման լիբերալ, վտանգավոր է և ոչ թե միայն ռուս-վրացական կոնֆլիկի հնարավոր էթնիկացման, այլև հատկապես՝ Վրաստանում ինքնության քաղաքականության շրջանակի ընդլայնման անհրաժեշտության պատճառով, ինչը հիմա կարծես թե պարփակված է չափազանց նեղ էթնոմշակութային սահմաններում: Սա հատկապես կարևոր է, որպեսզի վրացական պետությունը կարողանա էթնիկ փոքրամասնությունների լոյալությանն արժանանալ, որոնցից շատերը, ըստ Ազգային ժողովրդավարական ինստիտուտի (NDI) և Միջազգային հանրային ինստիտուտի (IRI) հարցումների, վրացական պետության հանդեպ իրենց վերաբերմունքով զգալիորեն տարբերվում են բնակչության մեծամասնությունից: Հավանաբար Սահմանադրության մեջ լրացումներ կատարելով Վրաստանը դաշնային պետություն դարձնելը կարող է զգալիորեն փոխել իրավիճակն այն տարածքների շուրջ, որոնք Վրաստանը չի վերահսկում ներկայում: Այս առաջարկը ներկայացվում է ոչ միայն Վրաստանի կառավարությանը, այլև առաջնահերթ՝ միջազգային դոնորներին:

Եվրոպական միությունն այժմ նոր մարտահրավերի է առերեսվում. լիբերալ նացիոնալիզմն արագ վերածվում է ոչ լիբերալ ժողովրդավարության, այժմ հիմնականում Լեհաստանում, Հունգարիայում և Ավստրիայում: Այս առումով գուցե իմաստ ունի վերանայել լիբերալ ազգայնականության հանդեպ դրական դիրքորոշումը և սկսել այն դիտարկել որպես լուրջ խնդիրների աղբյուր ոչ միայն Վրաստանում, այլև Եվրոպայում: Քանի որ ԵՄ-ին, ի տարբերություն ԱՄՆ-ի, ավելի քիչ են գրգռում Ռուսաստանի հետ կապված հարցերը, այն կարող է դառնալ (որոշ դեպքերում արդեն իսկ դարձել է) կոնֆլիկտի միջնորդ: Քանի որ այս պահին ընդհանուր քաղաքական միջավայրը չի նպաստում վրաց-ռուսական կոնֆլիկտի կարգավորմանը, ուշադրությունը պետք է սևեռել առկա մշակութային, տնտեսական և կրթական կապերը փոքր քայլերով զարգացնելու վրա:

Տնտեսություն

Եվրասիական ինտեգրացիոն գործընթացից դուրս գտնվելը չի նշանակում, որ Վրաստանը չի կարող օգուտ քաղել Ռուսաստանի հետ տնտեսական համագործակցությունից: Ռուսաստանի կողմից Արևմտյան

սննդամթերքի դեմ կիրառված պատժամիջոցները կարող են առիթ հանդիսանալ Ռուսաստանում վրացական գյուղատնտեսական ապրանքների շուկան ընդլայնելու համար: Հանրային տրանսպորտի և հանքարդյունաբերության ոլորտներում նույնպես համագործակցության մեծ պոտենցիալ կա: Միաժամանակ Վրաստանից որոշ քայլեր են պահանջվում նաև ռուսական զբոսաշրջության ակտիվ զարգացման համար: Նախ և առաջ՝ սահմանային անցակետերի քանակը կարելի է ավելացնել, իհարկե՝ անվտանգության հարցերը մանրամասն հաշվի առնելով: Ներկայումս մասնավոր տրանսպորտային միջոցներով Վրաստան ժամանող զբոսաշրջիկները դժգոհում են սահմանային անցակետերում երկար հերթերից: Զբոսաշրջիկները պետք է ապահովվեն նաև անհրաժեշտ լեզվական աջակցությամբ. այժմ զբոսաշրջային շատ վայրերում տեղեկատվական աղբյուրներից բացակայում է ռուսերենը: Քանի որ վերականգնվել է ուղիղ օդային կապը Ռուսաստանի և Վրաստանի միջև, գուցե հնարավոր լինի վրացական ավիափոխադրողին ֆինանսական աջակցություն տրամադրելու շնորհիվ ապահովել Ռուսաստանից դեպի Վրաստան մատչելի ավիատոմսերի առկայությունը, ինչի արդյունքում զբոսաշրջիկների քանակը կավելանա (այս պահին կենտրոնական Ռուսաստանից դեպի Վրաստան ավիատոմսի գինը գրեթե նույնն է ինչ դեպի որևէ եվրոպական երկիր): Հնարավոր է նաև խթանել ամառային չարթերային թռիչքների համակարգի զարգացումը, հատկապես դեպի Բաթումի: Ավելին, Վրաստանից դեպի Սուխումի ավիափոխադրման թույլտվությունը կարող է նպաստել վրաց-աբխազական կապերի ամրապնդմանը:

Զանգվածային լրատվության միջոցներ և կրթություն

Ռուսաստանի և Վրաստանի միջև քաղաքական կոնֆլիկտի ամենակարևոր բաղադրիչներից է ազգային (էթնիկ) կատեգորիաների գործածումը: Երկու կոնֆլիկտների դեպքում էլ կոնֆլիկտի նկարագրության լեզվից էթնիկ բաղադրիչը հեռացնելը հնարավորություն կտա այդ կոնֆլիկտի քաղաքական ասպեկտի վրա կենտրոնանալ: Միաժամանակ էթնիկ կատեգորիաների մերժումը կարժեզրկի էթնիկ պահպանողականների դիրքորոշումը կոնֆլիկտի երկու կողմերում: Հավասարապես կարևոր է նաև ապալեգիտիմացնել Վրաստանում լիբերալ ազգայնականության լեզուն, որը վտանգի տակ է դնում վրացական ընդհանուր ինքնության ավելի համապարփակ շրջանակը, որը ներառում է էթնիկ փոքրամասնություններին՝ նույն իրավունքներով, ինչպիսիք ունի «էթնիկ մեծամասնությունը»: Այս պահին սա չէ իրական պատկերը Վրաստանում, քանի որ, ինչպես ցույց են տալիս հարցումները, էթնիկ փոքրամասնությունները չափազանց մտահոգ են վրացական ազգայնականության աճով: Այս առումով կարևոր է վերանայել կրթական համակարգը, որը թաթախվում է պատմական, ինչպես նաև էթնիկ և մշակութային պատումների մեջ՝ Վրաստանի նոր միասնական ինքնության մշակման համար: Օրինակ՝ փոխանակ Խորհրդային միության կողմից վրացիների վիկտիմացումը հավասարեցնելու Ռուսաստանի կողմից վիկտիմացմանը, երկու ազգերին կարելի է բնորոշել որպես Խորհրդային Միության զոհեր և միաժամանակ՝ սովետական ոճի ավտորիտար համակարգի ստեղծման մասնակիցներ:

Ռուսերենը և դրա զարգացումը պաշտոնապես ճանաչվել են որպես Ռուսաստանի արտաքին քաղաքականության առաջնահերթություններ: Այս հանգամանքը կարող է նպաստել Վրաստանում ռուսերենով անցկացվող կրթական ծրագրերի՝ հիմնականում ընդհանուր մշակույթի և պատմության տարածքներում:

Վրաց օրթոդոքս եկեղեցի

Ռուսական օրթոդոքս եկեղեցու Մոսկվայի պատրիարքությունն ու Վրաստանի օրթոդոքս եկեղեցին պատմության ողջ ընթացքում ամուր կապեր են ունեցել: Նույնիսկ քաղաքական կոնֆլիկտն այս երկու երկրների միջև չի կարողացել քանդել այս միությունը: Չնայած այն փաստին, որ վրացական եկեղեցին չէր աջակցում ռուսական օրթոդոքս եկեղեցու Մոսկվայի պատրիարքությանը՝ Ուկրաինական ավտոկեֆալյան եկեղեցու հաստատման շուրջ կոնֆլիկտում, նրանց համագործակցությունը մեծ ներուժ ունի հիմնականում մարդասիրական ծրագրեր մշակելու հարցում, օրինակ՝ Աբխազիայում:

Միլիտարիզմի խեղճությունը. «Թավշյա հեղափոխությունն» ու միլիտարիստական քվազի-գաղափարախոսության պարտությունը Հայաստանում

Միքայել Զոլյան

Վերջին մի քանի տարվա ընթացքում՝ հայկական «թավշյա հեղափոխությունից» առաջ, իշխանական էլիտան հանրային վստահության ու լեգիտիմության սուր պակաս ուներ: Կառավարությունը փորձում էր այս վակուումը լցնել միլիտարիստական քվազի-գաղափարախոսությամբ, որը ներկայանում էր «ազգ-բանակ» հայեցակարգով: Ազգի համախմբման պատրվակով այս հայեցակարգը հասարակությանը խրախուսում էր միավորվել քաղաքական առաջնորդության շուրջ: Մինչև 2018-ի գարունը թվում էր, թե «ազգ-բանակ» կոնցեպտի շնորհիվ կառավարությունը հասել է իր նպատակին՝ քվազի-գաղափարախոսական լեգիտիմացում ապահովել նախագահ Սերժ Սարգսյանի իշխանությունը երկարացնելու համար: Այնուամենայնիվ, 2018 թվականի ապրիլին Հայաստանի հասարակության տարբեր շերտերի մասնակցությամբ զանգվածային բողոքի ակցիաների ալիքը տապալեց Սարգսյանի կառավարությունը: Զինվորականները «թավշյա հեղափոխության» ընթացքում հիմնականում չեզոք մնացին՝ բացառությամբ Սարգսյանի հրաժարականի օրվա՝ ապրիլի 23-ի առավոտյան մի դրվագի, երբ հայկական խաղաղապահ գնդի զինվորները միացան բողոքի ցույցերին՝ առանց զենքի, բայց համազգեստով: Եթե Սարգսյանի կառավարությունը հույս ուներ, որ զինվորականներն իրեն են սատարելու, սխալվեցին. «թավշյա հեղափոխությունը» եկավ ապացուցելու, որ «ազգ-բանակ» կոնցեպտը չի ոգեշնչել զինվորականներին ճիշտ այնպես, ինչպես չի ոգեշնչել քաղաքացիական բնակչությանը: Ժողովրդականություն չվայելող իշխանական էլիտան և լայնատարած կոռուպցիան թուլացրեցին «ազգ-բանակ» կոնցեպտի արդյունավետությունը՝ առկա համակարգի լեգիտիմացման հարցում՝ այդպիսով ճանապարհ հարթելով «թավշյա հեղափոխության» համար: Թեև «Ազգ-բանակ» միլիտարիզմի պարտությունն, անշուշտ, լավ է Հայաստանի և ամբողջ տարածաշրջանի համար, բայց դեռ վաղ է անհապաղ առաջընթաց ակնկալել ղարաբաղյան հակամարտության լուծման հարցում: Այնուամենայնիվ, երկարաժամկետ հեռանկարում Հայաստանում իշխանության փոփոխությունը նոր մոտեցումների հնարավորություն է բացում, ինչը կարող է տանել դեպի կոնֆլիկտի խաղաղ վերափոխում:

Պատերազմի և խաղաղության դիսկուրսներ՝ ղարաբաղյան կոնֆլիկտի համատեքստում. Ադրբեջանի դեպքը

Լալա Զումաևա

Լեռնային Ղարաբաղի բանակցությունների գործընթացի վրա ազդող գործոններից մեկը, որը կարող է ապագայում տապալել խաղաղ բանակցությունները, հայ և ադրբեջանցի պաշտոնյաների կողմից օգտագործվող ռազմատենչ հռետորաբանությունն է: Ադրբեջանում ռազմական ուժերի անընդհատ ավելացումը գործոն է, որը և՛ նպաստում է կառավարության՝ ռազմատենչ հռետորաբանությանը հավատարիմ մնալուն, և՛ ազդում է Հայաստանի անվտանգության երկընտրանքի վրա: Հայաստանը իր հերթին հարկ է համարում պատասխանել շարունակական միլիտարիզացիայի գործընթացին:

2016 թվականի ապրիլյան պատերազմից հետո հայկական կողմն առաջ տարավ իր սեփական անտագոնիստական հռետորաբանությունն ու միլիտարիզացիան: Այս երկկողմ միլիտարիստական մոբիլիզացիան մոգական շրջան է դարձել, որն առաջին հերթին սեփական օրակարգի համար օգտագործում են երրորդ կողմերը (ինչպես օրինակ՝ Ռուսաստանը, ԱՄՆ-ը, Իրանը), և սա բացասաբար է ազդում ընթացող խաղաղ բանակցությունների վրա՝ կողմերի միջև անվստահության մթնոլորտ ստեղծելով:

2018 թվականի ապրիլին նախագահ Ալիևն իր երդման արարողության ժամանակ պնդեց, որ ոչ միայն Լեռնային Ղարաբաղն է Ադրբեջանի պատմական հողերը, այլև՝ ժամանակակից Հայաստանի Հանրապետության տարածքը: Ինչ խոսք, այս հայտարարությունն անելիս, որը հիմնականում ներքին լսարանի համար էր, Ադրբեջանի ղեկավարությունը Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանը սպառնալու միտում չուներ. այնուամենայնիվ, Հայաստանում դա ընկալվեց հենց որպես իրենց սուվերենությանն ուղղված սպառնալիք: Նույն ամսում Ադրբեջանը հույս հայտնեց կառուցողական փոփոխության հասնել Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացում՝ Հայաստանում նախագահական ընտրություններից հետո կատարվող քաղաքական գործընթացների արդյունքում: Հայաստանում «թավշյա հեղափոխության» միջոցով քաղաքական իշխանության այս անսպասելի փոփոխությունը Ադրբեջանի կառավարությանը անակնկալի բերեց: Տեղական և միջազգային (հիմնականում ռուսաստանյան) փորձագետները, ինչպիսիք են Մարկովը, Սոբիանին, Տրոպինինը, մի շարք հայտարարություններ արեցին այն մասին, որ իշխանության այս փոփոխությունը կարող է ղարաբաղյան հակամարտության կարգավորման համար հնարավորություններ բացել՝ հույս հայտնելով, որ հարցի կարգավորման եղանակների վերաբերյալ Փաշինյանի դիրքորոշումը կտարբերվի Սարգսյանի դիրքորոշումից: Լայնամասշտաբ բողոքի ակցիաների և դրանց հետևանքով տեղի ունեցած «թավշյա հեղափոխության» ողջ ընթացքում և անմիջապես դրանից հետո Ադրբեջանի կառավարությունը ձեռնպահ մնաց Հայաստանի դեմ ղարաբաղյան համատեքստում թշնամական կամ ռազմատենչ որևէ հռետորաբանություն կիրառելուց: Չնայած սրան՝ ինչպես ավելի վաղ նշվեց, Հայաստանում մտավախություն կար, որ Ադրբեջանը պահը կօգտագործի և կվերսկսի պատերազմը Ղարաբաղում: Այնուամենայնիվ, երբ Հայաստանի նոր կառավարությունն իր դիրքորոշումը հայտնեց՝ պահանջելով Լեռնային Ղարաբաղի դե ֆակտո ղեկավարությանը ներգրավել բանակցային գործընթացում, Բաքուն կասկած հայտնեց, որ խաղաղ բանակցային գործընթացում էական փոփոխություն կլինի:

Առաջարկներ

Հայաստանում իշխանության փոփոխությունը Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացը «վերագործարկելու» բացառիկ հնարավորություն է:

Հայաստանի և Ադրբեջանի քաղաքականություն մշակողներին

Լեռնային Ղարաբաղի հակամարտության երկու կողմերի կառավարությունները պետք է բարելավեն բանակցային մթնոլորտը՝ չափավորելով միլիտարիստական և անտագոնիստական հռետորաբանությունը և վերացնելով ատելության խոսքն ու թշնամական դիսկուրսը: Հայաստանյան և ադրբեջանական ղեկավարությունները պետք է ձգտեն ավելացնել խաղաղության գործընթացի թափանցիկությունը և ապահովել խաղաղաշինական գործընթացում հասարակությունների ներառվածությունը՝ տարբեր երկխոսության ծրագրերով: Չնայած այն բանին, որ բանակցություններում առաջընթացը անհավանական է թվում կարճաժամկետ հեռանկարում, սակայն հռետորաբանության փոփոխությունը,

հետևաբար նաև՝ Լեռնային Ղարաբաղի խաղաղաշինական գործընթացում մթնոլորտի փոփոխությունը, կարող են աստիճանաբար առաջընթաց ունենալ:

Ավելի կոնկրետ, իշխանությունները պետք է անեն հետևյալը.

- առավելագույնս օգտագործել «վերագործարկման» հնարավորությունը՝ պաշտոնական և ոչ պաշտոնական մակարդակներում խաղաղաշինական գործընթացն առաջ շարժելու համար
- դադարեցնել ռազմական հզորությունների հետագա ավելացումը
- սահմանափակել/նվազեցնել/վերացնել ռազմատենչ հռետորաբանությունը պետական պաշտոնյաների կողմից
- զանգվածային լրատվության միջոցներում առաջ մղել այլընտրանքային դիսկուրս՝ միլիտարիստական և պատերազմամետ դիսկուրսի փոխարեն
- ստեղծել հայ և ադրբեջանցի լրագրողների համատեղ խորհուրդ, որն էթիկայի կանոնագիրք կմշակի՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանման համար
- Նախաձեռնել Ադրբեջանի ու Հայաստանի առաջին տիկինների հանդիպում և խրախուսել կանանց խմբերի համագործակցությունը, այդ թվում և Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական և հայկական համայնքների ներկայացուցիչներին
- Ներգրավվել բնապահպանական հարցերում և խրախուսել համագործակցությունը այս ոլորտում

Եվրոպական Միությանը.

- Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ իր երկխոսության մեջ ԵՄ-ն պետք է խրախուսի հայ և ադրբեջանցի պաշտոնյաներին հրաժարվել ագրեսիվ ռազմական հռետորաբանությունից և անցնել ավելի կառուցողական լեզվի՝ զերծ բռնության սպառնալիքներից և ատելության խոսքից:
- Եվրոպական Միությունը պետք է շարունակի խրախուսել և քարոզել կոնֆլիկտի վերափոխման միջոցները՝ Հայաստանի և Ադրբեջանի կառավարությունների հետ իր երկխոսության մեջ:
- Տեղի խաղաղասիրական համայնքներ կառուցելուն օգնելու համար դոնոր կազմակերպությունները պետք է մտածեն ապակենտրոնացնել խաղաղաշինական նախաձեռնությունների իրականացմանը տրամադրվող ֆինանսավորումը և մեծացնել Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտու՝ գործընթացներում ներառված կազմակերպությունների քանակը:
- ԼՂ խաղաղության գործընթացներին աջակցելու համար ԵՄ-ն պետք է իրականացնի առավել թիրախավորված խաղաղաշինական գործողություններ: Արևելյան գործընկերության ծրագրի շրջանակներում կարող են իրականացվել հետևյալ ծրագրերը.
    - «Եվրոպական գործընկերությունը՝ հանուն Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման» (ԵԳԼՂ, EPNK) պետք է շարունակի գործունեությունը,
    - Խաղաղաշինական գործունեությունը պետք է ամրապնդվի դեպի Հայաստան և Ադրբեջան մասնագիտական փոխանակման ճամփորդությունների միջոցով, որոնցում կարող են մտքերի, գիտելիքի, փորձի և մշակույթի փոխանակում ապահովվել: Այս ուղևորությունների հիմնական նպատակը կլինի խաղաղ կարգավորման գործընթացին ոչ քաղաքական ասպեկտ ավելացնելը:

Լեռնային Ղարաբաղի խաղաղ կարգավորման գործընթացի վրա Հայաստանի հեղափոխական փոփոխությունների ազդեցության ընկալումն Ադրբեջանում

Զաուր Ծիրիև

Հետհեղափոխական Հայաստանի կառավարության և ադրբեջանական կողմի միջև շփումներն առաջին հինգ ամսում խրթին էին. Ադրբեջանի ժողովրդի մեջ փոխոխության հույսը մեծացավ ու հետո փոքրացավ: Չնայած այս թռիչքներին ու անկումներին, թյուրընկալումներին, իրարամերժ հայտարարություններին՝ ամենակարևոր տարրն այն է, որ Հայաստանի նոր կառավարությունը կարողություն ունի առաջնորդելու կոնֆլիկտի կարգավորման ճանապարհը: Սրա պատճառն այն է, որ Բաքվում հասարակության և ղեկավարության մեծ մասը կարծում են, որ Հայաստանի նախկին իշխանությունները շահում էին ղարաբաղյան պատերազմի ժառանգությունից, մինչդեռ նոր առաջնորդներն ավելի բաց են, և նրանց թվում կան պաշտոնյաներ, ովքեր խաղաղաշինական գործի իրենց փորձն են բերում: Կոնֆլիկտի կարգավորման գործում առաջ գնալու համար վստահություն ստեղծելու հնարավորություն կա: Երկու կողմերը շատ տպավորիչ նախնական համաձայնության են հասել հրադադարի ռեժիմի և օպերատիվ կապուղու մասին, բայց նաև հասել են փոխադարձ թյուրըմբռնումների սահմանաչափին: Հետագա ցանկացած հակասական քայլ կամ զարգացում, որն այս թույլ վստահությունը կխաթարի, կարող է կործանարար լինել: Մոտ ապագայում, հատկապես Հայաստանի արտահերթ ընտրություններից հետո, շատ կարևոր է, որ ադրբեջանական կողմը տեսնի, որ Հայաստանի իշխանությունները խաղաղության տեսլական ունեն: Հայ հասարակության համար խաղաղության նախապատրաստման ծրագիր մշակելն անհրաժեշտ է ադրբեջանական հասարակությանը փարատելու համար:

Ղարաբաղյան դիսկուրսները Հայաստանում՝ թավշյա հեղափոխությունից հետո

Անահիտ Ծիրինյան

Չնայած Հայաստանում թավշյա հեղափոխությունը ներքին ուղղվածություն ուներ, իշխանության եկած նոր ղեկավարության ժողովրդավարական պլատֆորմի վրա ի հայտ գալն ազդեցություն ունի ընդհանուր արտաքին քաղաքականության և մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտության հարցում: 2018-ի մայիսին իշխանության գալուց հետո Փաշինյանը մի շարք հայտարարություններ է արել, որոնք թույլ են տալիս որոշակի պատկերացում կազմել նրա քաղաքականության մասին և, դա, ամենայն հավանականությամբ, Հայաստանի նոր դիրքորոշումը կդառնա՝ ղարաբաղյան կոնֆլիկտի վերաբերյալ: Մի քանի անգամ Փաշինյանը պնդել է, որ բանակցությունների ընթացքում կարող է խոսել միայն Հայաստանի անունից. Ղարաբաղի ժողովուրդը չի մասնակցում Հայաստանի ընտրություններին և նրան պիտի ներկայացնեն իր իսկ ընտրած ներկայացուցիչները: Որոշ առիթներով Փաշինյանը նշել է, որ պատրաստ է փոխզիջման, միայն եթե Ադրբեջանը հրաժարվի իր ռազմական հռետորաբանությունից և ընդունի Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Քայլերթերի ընթացքում Փաշինյանը նաև հայտարարել է, որ ոչ մի գործարքի չի գնա առանց Հայաստանի ժողովրդի հետ խոսելու, նույիսկ եթե

բանակցությունների արդյունքում հասնի իր գնահատմամբ արդար գործարքի:

Արժե նկատել, որ 2018 թվականի հոկտեմբերին Փաշինյանն ու Ալիևը համաձայնության են հասել լարվածությունը թուլացնելու և կողմերի միջև հաղորդակցման գիծ բացելու հարցում: Այս գործընթացը կարող է նպաստել բանակցությունների համար ավելի կառուցողական միջավայր ստեղծելուն, եթե կողմերը քաղաքական կամք դրսևորեն դրանք պաշտպանելու: Այնուամենայնիվ, թերահավատ լինելու պատճառ նույնպես կա, քանի որ վստահություն կառուցելու նախկին համաձայնությունները չեն կատարվել: Որպեսզի թավշյա հեղափոխությունը խաղաղաշինական գործընթացի հնարավորություն դառնա, երկու կողմն էլ պետք է ներդրում անեն այդ ուղղությամբ:

Առաջարկներ

Ադրբեջանի և Հայաստանի կառավարություններին

Հռետորաբանություն, հաղորդակցություն, հանրային բանավեճեր

- Ասելիքն ուղղված չի լինում միայն ներքին լսարաններին: Ցանկացած պոպուլիստ՝ ներքին լսարանին ուղղված ռազմաշունչ հռետորաբանութուն հասնում է նաև դիմացի կողմին և մյուսի բացասական կերպար ստեղծում: Ավելին, սա կարող է արձագանք առաջացնել ոչ միայն հռետորաբանության ձևով, այլև գործողությունների և չափազանցված ռեակցիաների ձևով, ինչը ձնագնդու էֆեկտ կարող է ունենալ: Ուստիև կողմերը պետք է ձեռնպահ մնան կոշտ և պատերազմական հռետորաբանության գործադրումից:

- Հոկտեմբերին երկու նոր ԱԳՆ խոսնակներ նշանակվեցին Ադրբեջանում և Հայաստանում, երկուսն էլ՝ կին: Սա նոր հնարավորություն է՝ ներառելու ավելի նրբերանգ հռետորաբանություն՝ կոնֆլիկտի վերաբերյալ խնդիրները մեկնաբանելիս: Երկու կողմերը պետք է իրենց զանգվածային լրատվության միջոցների հետ ավելի լայն ներգրավման ուղիներ գտնեն՝ խրախուսելով համագործակցությունը առցանց և ավանդական լրատվամիջոցների հետ:

- Երկու կողմերը պետք է տարբերակեն հասարակությունն իշխանությունից: Կողմերը, հաշվի առնելով, որ փոխադարձ «ուղերձ հղելը» անխուսափելի է, պետք է այնպես անեն, որ «նախազգուշացնող ուղերձները» չթիրախավորեն ժողովուրդներին՝ հայերին և ադրբեջանցիներին որպես ամբողջություն: Նմանապես, կողմերը պետք է ձեռնպահ մնան լեզվից, որը մյուս կողմին ապամարդկայնացնում է:

- Հաշվի առնելով այն, որ հնարավոր է՝ կողմերը մտածողության տարբեր «հաճախականությունների վրա» են, մեծ է հավանականությունը, որ հռետորաբանությունն ու գործողությունները թյուր կմեկնաբանվեն: Օրինակ, այն, ինչ բարի կամքի ժեստի մտադրություն է եղել, կարող է և մեկնաբանվել որպես նվաստացուցիչ բարեհաճություն կամ ուղղակի փիար-քայլ մյուս կողմից: Հետևաբար կարևոր է, որ կողմերում ուղերձներն ու դիսկուրսները ձևակերպեն հստակորեն, իսկ սխալ մեկնաբանման ռիսկերը չափեն ու խուսափեն դրանցից:

- Կողմերը պետք է մարտնչեն ապատեղեկատվության դեմ՝ օպերատիվ կերպով ժամանակին դրանք հերքելով, թույլ չտալով ավելի մեծ անտագոնիզմ և թշնամանք հրահրել:

- Կողմերը պետք է հանրային բանավեճեր կազմակերպեն այն մասին, ինչ դրված է բանակցությունների սեղանին: Ոչ մի կողմ չի կարող մյուսից ակնկալել փոխզիջման մասին խոսակցություն, եթե փոխզիջումների մասին ներքին բանավեճեր չի ունենում:

Փոխադարձ խորհրդանշական ժեստեր

- Փոքրիկ խորհրդանշական ժեստերի արժեքը թերագնահատել պետք չէ, և բարի կամքի ժեստերը պետք է ընդունվեն որպես այդպիսիք: Նման ժեստերը կարող են հնարավորություն բացել հիշողության վայրերում փոխադարձ այցեր կատարելու կամ սեփական տարածքում մյուս կողմի գերեզմանները պահպանելու պահպանելու համար: Ժողովրդական դիվանագիտության գործունեությունը նույնպես կօգնի վստահության ձևավորմանն ու ավելի կառուցողական մթնոլորտ ստեղծելուն:

- Երկու հասարակությունն էլ ցանկանում է տեսնել շոշափելի արդյունքներ, ինչպես օրինակ՝ 2014 թվականի Փարիզի համաձայնության կատարումը՝ ռազմագերիների, պատանդների և անհայտ կորածների խնդրի լուծման մասին: Երկու կողմից ազատազրկվածների ու պատանդների ազատ արձակումը խրախուսելի քայլ կլինի: Երկու կողմն էլ բաց են այս գաղափարի առաջ, ինչպես ասվում է 2016 թվականի մայիսի Վիեննայի հայտարարությունում, որը վերահաստատում էր աջակցությունը Կարմիր Խաչի միջազգային կոմիտեի աշխատանքին: Անհրաժեշտ են ԿԽՄԿ աշխատանքը բարելավելու և դրան աջակցելու մոդալություններ: Սա կարող է փոքր մասշտաբով շոշափելի արդյունքներ գրանցել և օգնել վերափոխել կոնֆլիկտի մարդկային դեմքը:

- Թեև Ադրբեջանում թերահավատ են Հայաստանի առաջին տիկնոջ «Կանայք հանուն խաղաղության» նախաձեռնության նկատմամբ, բայց ըստ ամենայնի, արժե ուսումնասիրել դրա հնարավորությունները: Հայկական կողմն իր հերթին կարող է ավելի պրոակտիվ փնտրել ուղիներ՝ լսելի դառնալու ադրբեջանցի մայրերին: Այս նախաձեռնությունը կարող է կանանց առաջնորդած խաղաղության արշավ լինելուց վերափոխվել բանակցային սեղանի շուրջ մասնակցության և խաղաղաշինության:

Լրատվամիջոցներին և հանրային կարծիք ձևավորողներին

- Մեդիան և հանրային կարծիք ձևավորողները պետք է գիտակցեն, որ դիսկուրսներ են գեներացնում և պատասխանատու են այն լեզվի և տոնայնության համար, որն օգտագործում են կոնֆլիկտը լուսաբանելիս: Նրանք պետք է ձեռնպահ մնան մյուս կողմին ապամարդկայնացնող մեկնաբանություններից:

Միջազգային հանրությանն ու միջազգային դոնորներին

- Միջազգային հանրությունն ու միջնորդները կարող են ներկայացնել և առաջ տանել այս առաջարկները համապատասխան կողմերում, խրախուսել տոնայնության և հռետորաբանության փոփոխությունը, ինչպես նաև կանաչ լույս վառել ժողովրդական դիվանագիտության նախաձեռնություններին ամենաբարձր մակարդակում: Վերջինը, մասնավորապես, կհաստատի, որ նման նախաձեռնությունների համար պաշտոնական կամ ոչ պաշտոնական խոչընդոտներ չկան:

- Միջազգային դոնորները կարող են աջակցել մեդիայի ներկայացուցիչների վերապատրաստմանը՝ կոնֆլիկտի վերափոխմանն ու կոնֆլիկտին վերաբերող լեզվի հարցում, որպեսզի խրախուսեն երկու երկրների լրատվամիջոցների կողմից ուղերձների ավելի զգայուն հաղորդակցումը:

Ամբողջական հոդվածները կարող եք կարդալ 2018թ.-ին տպագիր լույս տեսած «Կովկասյան թողարկում. կոնֆլիկտների վերափոխման հանդեսի» 3-րդ հատորի 2-րդ համարում կամ առցանց՝ հետևյալ հղումով՝ www.caucasusedition.net



Հարավային Կովկասի, Թուրքիայի, Ռուսաստանի և Միացյալ Թագավորության վերլուծաբանների համագործակցությունը, ինչի արդյունքն է այս հրատարակությունը, իրականացրել է Կոնֆլիկտների տրանսֆորմացիայի «Իմեջին» կենտրոնը, և ֆինանսավորել է Շվեդիայի արտաքին գործերի նախարարությունը:

Government Offices of Sweden

IMAGINE
Center for Conflict Transformation

«Իմեջին» կենտրոնն անկախ, ոչ քաղաքական կազմակերպություն է, որը նվիրված է կոնֆլիկտների պատճառով մասնատված հասարակությունների հարաբերությունները դրականորեն վերափոխելու և երկարատև ու կայուն խաղաղության հիմքեր ստեղծելու գործին:

www.imaginedialogue.com

info@imaginedialogue.com

© Caucasus Edition: Journal of Conflict Transformation